ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 138 — ՔՍԱՆ ՓԱՐԱՁ ՈՂՋ — ՇԱԲԱԹ 16/29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Նամակ կամ որեւէ դրութիւն պէտք է ղրկել առ Տնօրէն. ԱՐՇԱԼՈՅՍ դրագրի ԳԱՇԻՐԷ (Եգիպտոս)

E. TORQSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

ԱՐՇԱԼՈՅՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ
Տարեկան ոսկի դահեկ. 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ
Տարեկան Ֆրանք 20
Վեցամսեայ « 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐԸ ԿԱՆԽԻԿ եւ թղթատարի ծախքը հոնքագրութեանս վրայ է։

Հոնքագրութեանս ուղղուած գրութիւնք եւ չ'եկ տրուիր.

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

ԱՐՏԱՄԱՀՄԱՆԻ Պատ. բաժանորդներեն ջերմապէս կը խնդրուի որ բարեհաճին նախորդ տարիէն մնացեալ պարտուց կցելով ղրկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեշրջանի բաժանորդագինը, եւ հարկ չը թողուլ մասնաւոր դիմումներու, որոնք նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱԼՈՅՍԻ արդէն բազմազբաղ Տնօրինութեան։

ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

(Շարն. նախորդ թիւէն)

Երբեմն շարժումներ, դէմքի խաղեր կան, որոնք հակառակ ամենէն խնամոտ ու վարպետ ձանձերու՝ չեն զսպուիր, և եթէ լուրջ քննութեան առնուին՝ ամբողջ ներքին—մարդը կը մատնեն. սակայն ատոնք չ'են նշմարուիր առհասարակ հոն՝ ուր տարբեր տպաւորութիւններ արագ արագ իրարու կը յաջորդեն, և միտքը անուշադիր՝ շարունակ զբաղուած՝ խորհուրդէ խորհուրդ կը թռչի...։

Բայց ուր որ կեանքը լուռ, հանդարտ ու միօրինակ է, ուր մարդ աւելի իր մտքին տէրն է, և լարուած ուշադրութիւն մը պատրաստ է շարունակ դիտելու, զննելու ամեն մի երեւոյթ — որքան ալ անշան ըլլայ — անկարելի է որ նկարագիրները անծանօթ մնան երկար ատեն։

Ամեն անգամ որ կ'ստիպուիմ, պարագաներու բերմամբ անապատական—ճգնաւորի հանդարտ ու միօրինակ կեանք անցընել, իմ միակ հաճոյքս կը դառնայ ուսումնասիրել այն ամեն անձինքը՝ որոց հետ տեսնուելու առիթներ կ'ունենամ յաճախ։

Տեսեր եմ մարդիկ՝ որոնց համար Կրօնք, Ապառաժ, Սկզբունք, դաղափար, նպատակ, դոյութիւն չ'ունին բնաւ. մէկ բան միայն կը ճանչեն և կը պաշտեն, ՊՐԱՆ...։ Կ'աշխատին, կը յոգնին, կը տրքնին շարաչար, կը նուաստանան, կ'ստրկանան մի'շտ աւելին ա'լ աւելին ձեռք անցընելու համար. ընտանեկան յարկ, մայր, եղբայր, կին, զաւակ, ոչի'նչ, կարեւորութիւն չ'ունի. հապա դրա'մ, միա'յն դրա'մ...։

Ոմանք ալ ճոխ սեղան մը բազմելու, և իրենց նիւթական ու բարոյական շահերը ապահով վիճակի մէջ դնելու նպատակաւ՝ ճշմարտութեան և Արդարութեան ձայնը խեղդել կը ջանան և այսու՝ պատուաւոր մարդու մը համար է'ն սուրբ և նուիրական նկատուող Սկզբունքները կը մատնեն. իրենց ամենէն մօտ բարեկամներն իսկ կ'ուրանան, և հաղարումէկ շողոքորթութիւններով ցած ստրուկը կը դառնան անոնց՝ որոնցմէ միայն կ'ակնկալեն իրենց անձնական փառքն ու շահը...։

Տեսեր եմ շատեր՝ որոնք հրապարակային գովեստ մը լսելու, իրենց նը բարձրացնելու և իրենց անյագ փառասիրութեանը գոհացում տալու համար միջոցներու մէջ խտրութիւն չ'են դներ բնաւ։

Ուրիշներ ալ, թէպէտ ներքնապէս վերին աստիճանի ապականուած, փտած, և սակայն խստակրօն, լուրջ ու մաքուր բարոյականի տէր երեւնալու ճիգ մը ունին. մեծ զգուշութեամբ և անլուր ջանքերով կը ծածկեն իրենց այն ամեն մռածումները, զգացումներն ու գործերն, որոնք բոլորովին կը հակասեն աշխարհի առջև իրենց բարձրաձայն դաւանած սկզբունքները։

Տեսեր եմ — բարեբաղդաբար քիչ անգամներ — կարգ մը հրէշներ ալ, որոնք անձնուիրութեան, աղնուութեան և անկեղծութեան դիմակի տակ՝ իրենց բարեկամը խաբած՝ և անոր սիրուհին, նշանածը, կինը յափշտակած են...։ Ընկերութեան նախապաշարումները զոհ կը կոչեն և ամենախիստ պատիժներու կը դատապարտեն միայն սոնք՝ այն խեղճ և թշուառ մարդիկը — ժան Վալժաններ իսկապէս — որոնք շատ անգամ չոր հացի մը համար միայն նիւթեղէն առարկաներ կը գողնան. ոսկի, արծաթ, ադամանդ կամ մարգարիտ...։ Հապա որքա՜ն աւելի դատապարտելի են այդ վերև յիշուած յայտնի գողերը, որոնց գողցածը նիւթ չէ՛, այլ՝ Սիրտ, Պատիւ, Կեանք է...։ Ասոնց համար ընկերութեան անիրաւ դատաստանը պատիժ չ'է սահմանած... և սակայն աղնիւ ու պատուաւոր շրջանակներու մէջ՝ թուքի և ցեխի վճռով պատժուած են արդէն, և անպատուութեան ու մատնութեան սև կնիքը իրենց ճակտին՝ կ'զգան անշուշտ — եթէ սրտի ամենափոքր հիւլէ մը մնացած է դեռ իրենց կուրծքին տակ — որ կեանքի բաժինը այլևս իրենց համար, արհամարանք, անարգանք, և նողկանք միայն կրնայ ըլլալ...։

Եւ այսպէս ամեն անգամ որ նոր մարդ մը, նոր նկարագիր մը կը ներկայանայ աչքերուս առջև, և ես՝ հետաքրքիր և խուզարկու մտքով կը հետևիմ անոր մտածումներուն, կը գուշակեմ հազար ու մէկ հաշիւները, կը տեսնեմ կրած չարչարանքները, տքնութիւնները, նուաստութիւնները, ցածութիւնները երազած նպատակին հասնելու համար, կը յիշեմ անմիջապէս մեծն Ֆրանսլինի խօսքերը... «խեղճ մարդ... չափէն աւելի արժէք տուեր ես չչակիդ։»

(Շարունակելի) ՄԱՌԻ

ԺԱՄԱՆՑՆԵՐ

Ա.

Գիտէի որ չորեքշաբթի Ազգ. քանգրիայէն Գահիրէ պիտի գայ մեր նորընտիր Առաջնորդը. չհետաքրքրուեցայ սակայն նոյն օրն կայարան կամ Առաջնորդարան երթալ շատերուն պէս եւ տեսնել ամիսներէ ի վեր պպասուած Նորին Գերապատուութիւնը։

Այս դատապարտելի զանցառութեանս շարժառիթը, կը խորհիմ որ կա՛մ ոա ընկերութիւններու առատութեան ատեն Գործ. ժողովի մը անդամ չլինելս է, կամ Որբասիրացին՝ ինչպէս ուրիշ պարագաներէ, նոյնպէս Առաջնորդին գալու պարագային նպաստելու համար ունեցած մէկ թեզիկութիւնը։ Բայց մինչեւ մէկ ատենուան աւելի այս վերջինն է զիս պնդաքրքրութեան դատապարտողն, քան թէ առաջինը, որովհետեւ շաբաթներ առաջ պզտիկ բարեկամի մը պզտիկ խանութին մէջ կարօտս լաւ մը առի նորին Սրբազնութենէն, տեսնելով հոն ամբարուած անոր մեծկակ, խնամով պատրաստուած լուսանկարներն, որ կը կրէին յիշեալ ընկերութեան ձուաձեւ կնիքն եւ որ մասնաւորներու պիտի ղրկուէին, անշուշտ անոնցմէ որբերու համար բան մը փրցնելու նպատակով։

Այո՛, եթէ երբէք այս միջադէպը չպատահէր, շատ հաւանական էր որ, ժողովի մը անդամ չլինելու դժբաղդութիւնս ուրիշ կարգ մը դժբաղդութիւններու հետ ծալլած, մէկդի դրած, խառնուէի հետաքրքիր ամբոխին, եւ կամ՝ կայարանին մէջ Սրբազանը տեսնելէ յետոյ, փափաքէի մեր վսեմաշուքներն ու մեծապատիւներն անկէ Առաջնորդարան տանող եւ երեք գրաստ առաջ տեղացող անձրեւներուն չորցած ցեխերովը պըպզդուն կառքերուն մէկին մէջ նետուիլ ու երթալ ընկերութիւններու կողմէն արտատանուելիք ուղերձներն ունկնդրել։

Մի՛ կարծէք սակայն թէ կորուստ մ'ունեցած եմ այս բոլորն ըրած չըլլալուս համար, ընդհակառակը Սրբազանը տեսածի պէս եմ արդէն, ճեպ ճերմակ մօրուքով 60ը անցած անձնաւորութիւն մ'է, եւ կուրծքին վրայ կը կրէ ազգին մէկ կղերը ըլլալուն փոխարէն ստացած վարձատրութիւնները։ Իսկ գալով Առաջնորդարանին մէջ անցած գարձածին, ամեն ինչ շուտով կրցայ իմանալ. բարեպաշտ ազգային մ'էր եղելութիւններն ինձ պատմողը։

—Գացի՞ր Առաջնորդարան, հարցուցի։

—Այո՛, պատասխանեց հպարտութեամբ։

—Ի՞նչ տեսար ...

—Շա՛տ բան ...

—Ի՞նչ բան ...

—Երգեր երգեցին, ճառեր խօսեցան ...

—Ո՞վ աղէկ խօսեցաւ ...

—Իրաւ որ չեմ գիտեր ... խօսուածներէն բան մը չկրցայ հասկնալ ... մինակ տղայ մը փաթ փութ խօսած ատենը մազերս փո՛ւշ փո՛ւշ եղան ...։

—Քանի որ բան մը չէիր հասկնար, ինչո՞ւ մազերդ փուշ փուշ եղան ...։

—Անոր մազերն ալ փուշ փուշ կ'ըլլային ... տեսնէիր, անանկ ձեւեր կ'ընէր, անանկ ձայներ կը հանէր որ ...։

—Ի՞նչպէս տղայ էր այդ խօսողը ...

—Սանկ բարակ մարակ տղայ մը ... հարցուցի ... ըսին որ Սուտանէն որբերուն համար 50 ոսկի բերող տղան է ան։

Ա՛լ հասկցայ. այդ փաթ փութ խօսողը մեր բարեկամներէն մին է եղեր, Որբասիրացին։ Երեք հաստատուն սիւներէն մին։ Տղան չափազանց ջղային լինելով, ըսի իւրովի, կրնայ ստուգիւ շատ յուզեալ կերպով խօսած ըլլալ. ու միտքս եկաւ Ֆրանսայի հանրապետութեան նախագահ Պ. Քարնօի տխուր մահուան առթիւ Հայ-Հռոմէական եկեղեցիին մէջ կատարուած հոգեհանգստեան պատարագէն ետքն, անոր մէկ խօսած ճառն, Ֆրանսական հիւպատոսի ներկայութեան։ Այդ բարեպաշտ Հայուն պէս հիւպատոսն ալ այնչա՛փ յուզուած էր Քարնօի մահն ողբացող ու միեւնոյն ժամանակ, Հայաստանի աղէտներն իր առջեւ պարզող մեր բարեկամի զգայնութենէն, որ հազիւ հազ կրցաւ թոթովել Հայ կաթոլիկներուն թէ՝ դժբաղդ նախագահին նկատմամբ զգացած վիշտն ու Հայաստանի համար թափած արցունքները պիտի տեղեկագրէ նորընտիր նախագահ Ֆէլիքս Ֆորին։

Չեմ գիտեր թէ մեր նորընտիր Սրբազան Առաջնորդն ի՞նչ տպաւորութիւն ունեցաւ, եւ ի՞նչ պատասխանեց անոր ու միւսներուն. անշուշտ հետզհետէ այդ ամենը կիմանանք. կ'իմանանք նմանապէս օր մը թէ՝ այսչափ իրաբանցումներն ի՞նչ բանի համար եղած են եղեր։

ՎԱՐԱԶԴԷՆ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

2613	5887	880	9277	1965	3130
2026	9635	2303	1320	9269	4866
8194	6070	9253	1216	4177	6801
9077	6442	6839	682	8674	945
		3965	1509	9422	

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնտոն 25 Դեկտ. —Ֆրանսական գունդ մը յաղթահարած է Բաուրթինկ-Ֆուի քով Զինական 2500 կանոնաւորներ, և 4 թընդանօթ, շատ մը դրօշակներ, պաշար և ռազմամթերք գրաւած է։ Զինացիները փախած են 1000 հոգի կորսնցնելով։ Ֆրանսացիները կորուստ ունեցած չեն. քաղաք մը և քանի մը գիւղեր այրած են։

Բէրլին 26 Դեկտ. —Զինացիները Ցիթ-չէնի շրջակայքը Ֆրանսական ջոկատի մը վրայ յարձակած են։ Պաու զօրավարը յաղթած է անոնց և գիւղը այրած։

Զինացիները 1000 հոգի կորսնցուցած են։

Շանկհայ 26 Դեկտ, — Կը հաւաստեն թէ Զինական կառավարութիւնը՝ Թուան և Զէհուանկ իշխանները ձերբակալել տուած է Զանսիչէնսիի սահմանագլխին վրայ։

Քաբ 26 Դեկ. — Պոէրները Եօվէնրիի հեծեալ վաշտ մը կերի բռնեցին Պրիթսթաուն նահանջած ժամանակին։

Լոնտոն 26 Դեկտ. — Աֆղանիստանի Էմիրին հօրեղբայրը Ղօլամ Մօհամմէտ խան 90 տարեկան մեռած է Դամոսկոսի մէջ։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ՈՐԲԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. — Այս ընկերութեան արդի Պատ. Գործ. Ժողովոյն ընտրութենէն ի վեր, ցոյց տրուած եռանդը ու գործունէութիւնը, պիտի կրնանք ըսել, ամեն քընչնչոգատութենէ վեր պէտք է նկատել։

Ամէն առիթէ օգտուիլ գիտցան, որբերուն արդար բաժինը հանելու համար։

Ներկայացում տուին ու բաւականացան։ Տ. Մելիք Ս. Դաւիթ Բէկի կողմէն նուիրուած 400 կտոր ԼՈՒՍԻՆԵԱՆԻ անուն հեղինակութենէն հրապարակ հանեցին, ու լաւ ընդունելութիւն գտան՝ սպառելով բոլոր դրքերը։ Այվազեան Եպիսկոպոսի գալստենէն անդամ օգտուեցան, անոր լուսանկարներն ի հաշիւ որբոց այլեւայլ անձանց հասցէին ղրկելով՝ և իւրաքանչիւրին փոխարէն գումար մը գանձելով։

Որբասիրաց ընկերութեան մէկ օրինակելի ձեռնարկին ալ ի պաշտօնէ տեղեակ կ'ըլլանք, Պատ. Գործ. Ժողովոյն մեղ ղրկած հետեւեալ նամակէն։

Պատուարժան Տնօրինութիւն ԱՐՇԱԼՈՅՍԻ

Որբասիրաց Ընկերութեանս Գործադիր Ժողովը կը հաստատէ թէ՝ Վատի Հալիֆա, յանուն եւ ի նպաստ Ընկերութեանս ձեռնարկուած նուիրատուութեանց գանձումէն՝ (41) քառասուն եւ մէկ եգիպտական ոսկի ստացած է ձեռամբ Ընկերութեանս Մայր-Դիւանի Ատենադպիր Տ. Ս. Օտապաշեանէ։

Շնորհակալութիւն չենք յայտներ յարգելու համար մեր համակրելի Ատենադպրին կամքը, ու կը մաղթենք որ ամեն հայ անհատ օգտուի իր այնքան եռանդով ցոյց տուած Որբասիրական գործունէութենէն։

Նոյնպէս Գործ. Ժողովս կը ծանուցանէ թէ՝ ի մտոյ պիտի հրատարակէ Ընկերութեանս հաստատման թուականէն մինչ տարւոյս վերջ՝ իր ներկայ ու հրաժարեալ անդամներու իւրաքանչիւրին ըրած վճարմանց քանակը։

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան

Վ. Ատենադպրի Ատենապետ
Կ. ԵՐԶՆԿԱՑԵԱՆ Ա. Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Գահիրէ 28 Դեկտ. 1900

ԼՈՐՑ ՔՐՈՄԷՐ որ Սուտան գացած էր, հինգշաբթի օրը Օմտուրմանէն երկաթուղի նստած է Գահիրէ վերադառնալու համար։

ՄՈՐԱՆԱ ՀՐԱՄԱՆԱՏՍԸ որ եգիպտական հանրային պարտուց մէջ Իտալական քննիչ էր, առջի օրը մեռաւ թեթեւ վէրքի մը հետեւանքով։ Մահը 24 ժամուան մէջ տեղի ունեցաւ, հիւանդին շաքարախտային խառնուածքին պատճառով թունաւորում առաջ գալով։

Մորանա ապրեալը 60 տարեկան էր և Իտալիոյ մէջ շատ յարգուած. Կարիպալտիի ուղղակիներէն մին եղած է իր երիտասարդութեանը ժամանակ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ կադավարութիւնը 30,000 ֆրանք եւս տուած է Գահիրէի հիւանդանոցին համար։

Կահ կարասիքը մօտերս պիտի տեղաւորուին և կը կարծուի թէ՝ բացումը Փետրուար ամսոյ մէջ պիտի կատարուի։

ԹԵՐԹՕՆ

Ը.

ԻՆՉՈ՞Ի ՉԵՆՔ ՅԱՋՈՂԻՐ

ՏԵՍԻԼ Ե.

ՆԻՍՏ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՑ

(Շարունակութիւն նախորդ թիւին եւ վերջ)

Վերջապէս հասաւ հանդիսի սկզբնաւորութեան վայրկեանը. Խոիվական քայլերգը օգը կը թնդացնէր, որուն աւարտմանը սկսան նուագել Արիք Հայկազունքը։ Ցանցառ հանդիսականները դանդաղ քայլերով նուագարանի կողմը ուղղուեցան, սակայն նուագածութենէն ոչինչ կարողացան հասկնալ. կազմակերպիչները հոս ալ մոռցած էին նկատողութեան առնել թէ, այդ նուագածութիւնը հայերը միայն կ'ոգեւորէ, ուստի պէտք էր աւելի կարեւորութիւն ընծայել անոնց զուտ հայկական հանդէսի մը մէջ։

Նուագը որչափ ալ կանոնաւոր եւ ոգեւորիչ ըլլար հայերու համար, սակայն նոյնչափ եւ աւելի կը կնճռոտեցնէր տեղացի ներկաներու զուարթ դէմքը, որոնք այդ միջոցով կ'ուզէին հասկցնել թէ իրենց եա ղեղին աւելի գերազանց կը համարին....։ Քանի մը վայրկեան վերջ այդ ցանցառ հանդիսականներն ալ անյայտացան, առանց գաւաթ մը գարեջուր խմելու եւ պատառ մը մեզի առնելու, որոց համար անոգին ծախքեր եղած էին, ի հաշիւ հայ ժողովուրդի ազգ մասին մտաւորական զարգացման։

Պարասրահը դատարկ էր, «մէկ երկու զոյգ, ու ապա ոչինչ...» թէեւ թուով ցանցառ բայց բարձրաստիճան պաշտօնեայք, որոցմէ առատ....հասոյթ կը յուսային հանդէսի կազմակերպիչները, առ ի չգոյէ պարունիներու մեկնած էին...։

Հասոյթ բառը, այս հանդէսին համար թուանշանի մը ձախ կողմը երկու զէրօ կը նշանակէր...։

Կազմակերպիչները հասկնալով իրաց անախորժ կացութիւնը, հետեւեալ օրը իսկ ժողով մը գումարել որոշեցին, խոշոր սաւան մը գտնելու եւ ծածկելու համար, Հէլուանը, Ցայգահանդէսը, հրթիռները, լապտերները, դրօշակները, նուագը, պարը, պարավայրը, պիւֆէն, պիրան, մաստիքան, լոգումը, Շամբանեան եւն. ու ամենէն վերջը Դլիւպին դուռը...։

)-(

ՏԵՍԻԼ Զ.

Գործադիր Ժողով
Ցայգահանդէսի յաջորդ օրը

)-(

Հետեւեալ օրը ցայգահանդէսը, բացի կազմակերպիչներէն, ուրիշներուն վրայ ո՛ եւ է տրպաւորութիւն ձգած չէր։ Գահիրէն, որ ոտքի պիտի ելլէր ցայգահանդէսին համար, բան մ'ալ եղած չ'էր, եթէ կարելի ըլլար, բառարաններուն մէկ անկիւնը իբր յաւելուած պիտի աւելցուէր. ցայգահանդէս. կը նշանակէ բացարձակ անյաջողութիւն...։

Բայց դասակ մը կար որ ցայգահանդէսի հետեւեալ առաւօտուն արթնցած տեսնէն իսկ, տխուր շատ տխուր մտածմանց մէջ թաղուած էր. «հաշուեկշիռը կշռել պէտք էր....։»

Ժամը հինգն էր. Ատենապետը ժողովականներուն կ'ըսպասէր անհամբեր։

Մէկ մէկու ետեւէ ուր ուրեմն հաւաքուեցան։

Ատեանը բացուեցաւ ժամը 7 1 (2 ին։

ՕՏԱՇԵԱՆ. —(Ատենապետին առաջ) անբաղդատ մնացած նպաստներէնք հաշուոյն ո՞ր կողմը պէտք է անցնել։ Ես պիտի առաջարկեմ որ ատոնք, իբր ընթերցողներ ներկայացնենք ընդհ. Ժողովոյ Դիւանին, որովհետեւ անոնք ալ Հայտարին ծախած շահանայ էն տարբերութիւն մը չ'ունին։

ԱՄԵՐԻԿԵԱՆ. — Եւ ճիշտ ասոր համար է որ կուզեմ ձայնակցիլ Տիար Օտաշխանին, գիտնալու համար թէ այս խոշոր ծախուց....։

ԱՏԵՆԱՊԵՏ. — Խոշոր ծախք ըսելովդ.... հասկցայ.... գործը երկարելու հարկ չ'կայ։ Խօսքը մէջերնիս. ուտելիք խմելիք եղած է, ե-

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Զորեքշաբթի օրը, կէս օրին Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան Գահիրէ ժամանեց։ Ընդունելութիւնը շատ փայլուն էր։ Երկաթուղւոյ կայարանը դիմաւորողներուն մէջ կը տեսնուէին Ն. Ն. Վ. Վ. Պօղոս և Տիգրան փաշաները և ուրիշ ազգային շրջանակին պատկանող պաշտօնական անձնաւորութիւններ։

Գեր. Յոհաննէս Եպիսկոպոս Առաջնորդարան հասնելէ վերջ, լսեց այն ամէն ուղերձներն, որոնք ըստ սովորութեան կը կազմուին Առաջնորդի մը նոր հասնելու առթիւ։

Այս ամենուն փոխարէն, Նորին Գերապատուութիւն իւր շնորհակալիքն յայտնեց, մասնաւորապէս Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան, որուն Գործադիր ժողովոյ երկու անդամներն, իրենց Ատենապետին հետ փութացած էին սովորական ուղերձը մատուցանել։

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ. — Համակրելի Տիար ՍԻՄՈՆ ՖԷԼԷԿԵԱՆ ի վերոյեալ բանաստեղծական գրքոյկին հրատարակութիւնը, որ ժամանակէ մը ի վեր իւր զբաղմանց պատճառաւ ընդհատուած էր, այսօր եօթերորդ ֆորման հրապարակ կ'ելլէ, և մինչև աւարտիլը՝ շաբաթական մէկ ու կէս ֆորմա պիտի հրատարակուի։

ՀԱՅ ԹԱՏԵՐԱՄԻՐԱՑ ԽՈՒՄԲԸ վերջնական որոշած է վաղը երեկոյ տալ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆի ներկայացումը, որ անցեալ կիրակի անձրևներուն ու ցեխերուն պատճառաւ ուրիշ օրուան յետաձգած էր։

ՕՐՈՒԱՆ ՄԸ ԱՄՈՒՍՆԱՑԻԱԼԸ. — Մեր առաջիկայ թիւերով իւր Բանասիրական պիտի սկսինք հրատարակութիւնը ՀԱՆՐԻ ԼԸ ՎԷՐՏԻՑԷի մէկ Նարավէպին, զոր մեր աշխատակիցը ԼԵՒՈՆ, մեծ խնամքով թարգմանած է, անոր շատ հրահանգիչ և չափազանց հետաքրքրական պարունակութիւնը ի նկատի ունենալով։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ամերիկացի միլիարատէր մը Պ. Պրոտուէյ Ռու որ կոյր էր, մէկ միլիոն խաստացած էր այն ակնաբոյժին որ կարողանար իր աչքերը բանալ։

200 հարիւրէ աւելի ակնաբոյժներ ամեն տեսակ ակնաբուժական գործողութիւններ կատարեցին վրան առանց օ և է արդիւնքի, մինչ այն գործողութիւնները կրեց նմանապէս առանց արդիւնքի Մարթէն անուն աղքատ կոյր մը։

Միլեառատէրը աչ հրաժարած է իր աչքերուն վրայ օ և է գործողութիւն մը կատարել տալու և ամեն տեղ կը հրապարակէ ակնաբուժութեան պարապ բան ըլլալը։

* * *

ԱՈՐԾԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԴՐԱԽՏԸ ԷԼՏՕՐԱՏՕՆ

Եթէ արժանահաւատ անգղիական հանդէսի մը ականջ կախենք, առանց հակառակութեան այս մակդիրը տալու ենք Միացեալ Նահանգներու Բիթրսպուրկ քաղաքին, ուր 8000 ի չափ մետաղագործական գործարաններ կան, որոնց մէջ աշխատող ամենայետին գործաւորը օրական 22 ու կէս ֆրանք կ'առնէ ութը ժամուան աշխատութեան համար. ասիկայ նոր սկսողներուն օրավարձքն է։ Պողպատեղէն ծեծող մը Անտրիու Քարնէգի օրական 35–40 ֆրանք կը շահի, այս հաշուով պարբկան 12500 ֆրանքի չափ դրամ կ'ստանայ, առանց աշխատելու ոչ կիրակիները, ոչ տօնի օրերը։

Թիթեղագործ մը 45 ֆրանք կ'առնէ, իսկ կաթսայագործները հանքածուխով ճուլածոյ երկաթ զտողները, ատիւրեօղները և ն. որոնց արհեստը աւելի փորձառութիւն և տպաւնդ կը պահանջէ 60–80 ֆր. կ'առնեն, նոյն իսկ 100 ֆրանք առնողներ կան օրական 8 ժամ աշխատութեան համար։

Այս դասակարգի աշխատաւորներուն միջին հաշուով տարուան մը ստացած դրամը 25000 ֆրանքի կը հասնի։

Որչափ որ ալ այս լուրերը արտաքոյ կարգի երևին, իրաւի են։ Բիթրսպուրկի մէկ քանի ատ ատ ատ քաղաքին մէջ զանազան կալուածներ ունին և կառքերով իրենց գործատեղը կ'երթան։ Անգղիական Ֆանդէսին մէջի յօդուածագիրը կը յիշէ նոյն իսկ այս դրամատէր–գործաւորներուն միոյն անունը Պ. Ճէյմս Մաք Ֆլօսքի, որուն աղջիկը այս պահուս Եւրոպայի մէջ իր ուսումը կ'աւարտէ և որ 10,000 տոլարի չափ դրամ մէկդի կարողացած է դնել։

ՍԻՆԿԷՐ

ՎԱՃԱՌԱՏԱՆ ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ

Քանի մը օրերէ ի վեր Սինկէրի կարի մեքենաներու վաճառատանց ցուցափեղկերը անցորդներու ուշադրութիւնը կը հրաւիրեն։ Ժ. Նայտլինկէր Տունը, հիանալի գաղափարը ունեցաւ էլեքտրականութեամբ բանեցնելու իր կարի մեքենաները։

Արդարև շատ հետաքրքրաշարժ է տեսնել այս սքանչելի կարի մեքենաները, որ ամեն մարդ կը ճանչնայ իբր ժամանակ խնայող և կարը շատ հանգստաւէտօրէն կատարող. մանաւանդ այժմ էլեքտրականութեան կիրառումով աւելի հրապուրիչ և աւելի նպաստաւոր դարձած է։

Միայն էլեքտրական շարժիչի մը օգնութեամբ կրնայ շարժման մէջ տրուիլ մէկ կամ աւելի կարի մեքենաներ նոյն իսկ զօրաւորագոյններն, անոնք իսկ որ 4 կտոր իրարու վրայ դրուած հաստ կաշիներ կը կարեն։

Մեքենաները այսպէսով աւելի դիւրին կը դառնան և ալ կարօտ չ'են ըլլար ձեռքի օգնութեան։

Ջերմօրէն կը հրաւիրենք մեր պատուարժան յաճախորդներն որ ժամը 10–12 և 3–4 հաճին վայրկեան մը կանգ առնեն մեր վաճառատանց ցուցափեղկին առջև, որք կը գտնուի Քաֆէ Տը Լա Պուրսի քովը օթէլ Պըրիսթօլի դիմացը, էլեքտրաշարժ մեքենաներնուս բանիլը տեսնելու համար։

Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՁԻՆԻՈՐԻ ՄԸ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բէքինէն 26 Դեկտ. Թուականաւ եկած հեռագրումը կ'ըսէ թէ՝ Ամերիկացի զինուոր մը, որ մոլորած ջորիները գտնելու գացած էր՝ Հօ–Սին–Ռի հասած և հոն արագահարուած թնդանօթ–ռէվոլվէր մը ու 5000 թնդանօթի փամփուշտ ձեռք ձգած է։ Գիշերը հոն տեղի նամակատունը մնալով՝

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ամերիկացի միլիարատէր մը Պ. Պրոտուէյ Ռու որ կոյր էր, մէկ միլիոն խաստ.

թէ կուզես Կաղանդին կրնանք հայերուն ծախել։

ՕՍԱՇՂԵԱՆ — Էօյլէ եա. ինծի կայարանը թողուք եւ դուք ամէն բանը եաղմայի տաք...։

ՇԱԹՕԵԱՆ. — Ինչ որ է՝ եղածը եղած է. արդէն մեր մեծ սխալը այն է որ մեր հանդէսը Հէլուան կատարեցինք...։

ԲԱՄՊԱԿԵԱՆ. — Աղէկ որ դուք կ'ըսէք. միթէ դուք չէ՞ք յատակագիծը պատրաստող եւ ներքին գործոց նախարարութեան ներկայացնողը...։

ՇԱԹՕԵԱՆ. — Ես շատ բան կը պատրաստեմ. միթէ դուք իրը ընկեր իրաւունք չունի՞ք խորհելու եւ Ձեր հիմակուան խօսածները այն տեղն խօսելու...։

ԱՄԵՐԻԿԵԱՆ. — Դուք այնչափ վստահօրէն եւ շլացուցիչ կերպով ներկայացուցիք ձեր կարգադրութիւնն, որ ձեզ դէմ առարկութիւն ընելու համար Փէէլիվանեան էֆէնտի մը պէտք էր որ հարկ եղած կանխատեսութիւններն ընէր, եւ իւր իրաւանց սահմաններն գիտնար եւ պաշտպանէր։

Զօր օրինակ Փէէլիվանեան էֆէնտի կարող էր ըսել թէ՝ պարահանդէսը չ'լինիր, որովհետեւ մենք ամուրի ենք, ոչ ոք իր կնիկը ու աղջիկը կը բերէ մեզ հետ պարել տալու համար...։

ՇԱԹՕԵԱՆ. — Դուք՞ ալ այս յետադիմական գաղափարներն ունիք. պէ՛ հէ՛ բիֆ, ես իմ քէֆի՞ս համար կարգադրեցի. չէ՞ մի որ ազգի եւ ընկերութեան օգտին համար էր. պէտք չէ՞ր որ ամեն Հայ իր կարողութեան չափով օգնէր, ինչպէս կ'ընեն ուրիշ ազգեր։

ԹԱԹՕԵԱՆ. — Ո՛չ. պարո՛ն, սխալ կը հասկընաք. մինչեւ ցարդ Հայերը մեր ամէն օրինաւոր ձեռնարկներն լիապէս վարձատրած են. մենք ըսել կուզենք թէ ցայգահանդէս կազմակերպելու չէր։

ՇԱԹՕԵԱՆ. — Ես կը հաւատամ որ Հայերը այդ յետադիմական գաղափարներուն համար դատարկ թողուցին պարասրահը։ Բայց գիտցէ՛ք թէ՝ պէտք է հասկցնել իրենց որ 5 դրչ. վճարելով գլուխնուս պիլայ չենք ուզեր. պէտք է այդ յետադիմականներուն հետ մեր յարաբերութիւնները դադրեցնել...։

ԱՏԵՆԱՊԵՏ. — Օրակարգէն չ'շեղինք, հաշուեկշիռ եւ տեղեկագիր պէտք է պատրաստել Մայր Դիւանին պատասխանելու համար...։

ՕՍԱՇՂԵԱՆ. — Քանի որ յաւելեալ գումար մը չ'կրցանք ունենալ, ի՞նչ պիտի կրնանք ընել...։

ՇԱԹՕԵԱՆ. — Խորհեցէ՛ք, ինձմէ՞ կը յուսաք ամեն բան։

ԱՏԵՆԱՊԵՏ. — Դուք ալ մասնակցեցէք մեր խորհրդին։

ՇԱԹՕԵԱՆ. — Որպէսզի ապագային «դո՛ւք ըրիք, դո՛ւք ըսիք» ըսէք ու մէջէն ելլա՞ք։

ԱՏԵՆԱՊԵՏ. — Հիմակ այս հաշուեկշռոյն մէջէն ելլանք տէ, վերջն Աստուած ողորմած է։

ԲԱՄՊԱԿԵԱՆ. — Քանի՛ քանի՛ անգամներ այսպիսի կնճռոտ խնդիրներու մէջ թաթօեան օգտակար եղած է. այս անգամ ալ թող չ'զլանայ իր խորհուրդները մեզի տալէ։

ԱՏԵՆԱՊԵՏ. — Այո՛, կը յիշեմ, տեսակներու խնդիրը կ'ակնարկէք...։

ԹԱԹՕԵԱՆ. Երկար բարակ մտածելու հարկ չ'կայ, եթէ Ընդհ. Ժողովոյ Ատենապետէն կը վախնաք, հանրագիր մ'ալ սնոր համար կը պատրաստենք ու ստորագրել կուտանք...։

ՕՍԱՇԽԵԱՆ. — Այո՛, միթէ տուաջնոյն մէջ չ'յաջողեցա՞նք, որուն մէջ բացարձակապէս անիրաւ ալ էինք...։

ԱՏԵՆԱՊԵՏ. — Այո՛, այո՛, Ընդհ. Դիւանի Ատենապետը նոյն ինքն իր բերնով վճիռ արձակեց քանի մը ընկերներ մերժելու (ուրեմն նախախնամութեան մասը կայ այս գործին մէջ) բայց ես հանրագիր պատրաստելու կուսակից չ'եմ. ես կ'առաջարկեմ Պրօբականդ ընել եւ Մայր–Դիւանը փոխել, մեծ մարդիկ հրաւիրել, այսպէսով թէ՛ ընկերութեան ապագան կը փայլի եւ թէ անցեալը կը մոռցուի. միայն թէ այլեւս պար կամ պարահանդէսի, մանաւանդ ցայգահանդէսի վրայ մտածելու չէ. ասիկայ խարանահարին ջորին իւրիւրմիշ ընելու կը նմանի։

ՎԵՐՋ

հետևեալ օրը արագահարուած 4 հրացան ու 11 հազար գնդակ ևս ձեռք կը ձգէ և ետ կը դառնայ։ Ճամբան շատ անգամ վրան կրակ բրած են, բայց ինք չէ պատասխանած։

ՄԱՐՕՔ.— Մատրիտի Դորրէսբոնտենցիա թերթը, Թանճէրէն հեռագիր մը կը հրատարակէ, որուն մէջ կ'ըսուի թէ՝ Թանճէրի և Ֆէսի շրջակայքը գտնուող ցեղերը ապստամբեր են և այս երկու քաղաքներու մէջէն անցնող կարաւանները կը կողոպտեն։ Ապստամբութիւնը դէպ ի Հիւսիս-Արևմուտք կը տարածուի։ Սուլթանը չ'յամարձակիր Մէրաքէշէն դուրս ելլալ՝ զինքը պաշտպանելու կարող բանակ մը կազմակերպելէ առաջ։ Կ'երևայ որ Անգլիացիք և Գերմանացիք այս կացութենէն օգուտ քաղելով շատ մը արտօնութիւններ և առանձնաշնորհումներ պիտի ուզեն Սուլթանէն։

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՏԻԿԻՆ ՍՈՖԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Շարա-Ապտիլ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրունֆիլէն փոխադրած է Շարա Ապտիլ Ազիզ, Ալի փաշա Շէրլիֆի պարտիզին դիմաց, Ահմէտ պէյ Ապտիլ Բազզիի 20 թիւ սենեկանութեան մէջ։

Տիկին Սոֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիրէնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն։

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում։

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՖԵԱՆ

ԳԵՐԶԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ-էլ-Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՝ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական-դերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանդուցեալ Նուպար Փաշայի Տայրաին դիմացը, նորաշէն խանութներուն մէջ։

Թէ՝ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով։

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (Ի Պուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է։ Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ։ Մինչդէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օք-սիտէ ժամացոյցներ. պատի և քօնսոլի ժամացոյցներ. պատի և քօնսոլի ժամացոյցներ Բանտիւլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք։

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Ֆօ. նօկրաֆներու։

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՍԻՆԿԷՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ Ֆ. ՆԱՑՏԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց. Խալնէտարի սեփականութիւն, Պրիսթոլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից։

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է։

400 է աւելի վկայականներով եւ մեծայղներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է։

ՀԱՏԹԱՑԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ՀԱՏԹԱՑԹԻՉ ԱՆԳԼԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ

ՀԱՏԹԱՑԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱՆԱՆԸ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յատկանշին։

ԳԻՆ ՁԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուներուն մէջ։

Վճարման Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՀԸԸ

Օսմանիյէ դեղարանին դիմացի փող ցին մէջ.

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին.

Այցեքարտեր, Շրջաբերականներ, Գիրքեր, Հրաւիրագրեր, Մահագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ տպրանի վերաբերեալ յանձնարարութիւններ։

Կը վաճառուին հետեւեալ գրքերն.

1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ ի Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ։

2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է եղեր։

3. ՀԱԻԱՔԱԾՈՑ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լեոն Եղիազարեանցի։

4. ՁՈՒԱՐՃԱԼԻ Անեքդոտներ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ։

ԱԶԴ

Եգիպտաբնակ ազգայնոյ կը փութանք ծանուցանել թէ՝ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան հն. ի մասին։

Ցիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով։

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ դումար մը ևս կանխավճար՝ իւր հաց. ցեին յ'Ազգ. վարժարանն ի Տարպ-էլ-Կի. նէնա։

Ա. ՊԱԼԵԱՆ

ՄԱԹԻԼՏ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՏՀԻ ՄԻՋՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները։

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց դումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է։

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագին կը գանձէ։

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻԶՕՆ գլխաւոր գործակատար յԱղեքսանդրիա։